

հաւատար: Բայց կը սիրէր ամէն հայու պէս իր եկեղեցին
թէ՛ իբր ոգի, թէ՛ իբր մեր օրերու կարելի կազմ, մեր
հաւաքականութեան դիմագիծ մը ճարելու: Կովկասի մէջ
հողը կը վրիպէր անոր ոտքէն: Բայց Տաճկաստանի եկե-
ղեցականութիւնը կ'արժէր աւելի, դեռ տէրը ըլլալուն ժո-
ղովուրդի վրայ իր հմայքին: Սահմանադրութեան բա-
րի՞ք: Թրքական բռնութեան դէմ հակահարուած: Կարե-
ւորը գոյութիւնն էր ժողովուրդը վարող մարդոց: Այս
գաղափարները անշուշտ պատուաստ էին արմաշական
առաջնորդէն: Ընկեր Մաթիկը, Կիլիկիոյ թեմին վրայ,
օրինակի մը համար, դրաւ մէկը Վանի իր ճանչցած վար-
դապետներէն, պատուական, բայց զմայելի աստիճա-
նով՝ իբր նկարագիր ու խառնուածք: Կարծես չորրորդ
դարու արեղաներէն նոր կը բաժնուէր անիկա, այնքան
չէնքն ու շնորհքը անցեալին կը պատկանէին: Օրուան
քսանչորս ժամերէն չորսը այդ մարդը տուած էր քունի,
տասնութը՝ աղօթքի, խոհանքի, ապաշխարանքի: Եր-
կուքն ալ՝ աշխարհիկ զբաղումներու, պարտէզէ ու նախի-
րէ ու ուխտաւորներէ: Անոր ծունկերը ոստրէի նման խե-
ցեպատ էին ժամերով ծնրադրումէն, խցիկին քարերուն,
ու մէջքը՝ անուշիկ կամար, պզտիկներու նիստին համար
ըսես յարդարուած: Աղթամարի միաբաններէն այդ հրեշ-
տակցու արեղան ինչո՞վ էր օգտակար իր ժողովուրդին:
Կենդանի՞ մասունք մը: Օրհնել անգամ կը վախնար անի-
կա, վասնզի իր անձը գիտէր մեղքով ականակո՛ւռ: Հա-
կառակ անսահման բարութեան, բացարձակ աղքատու-
թեան, Մաթիկը անոր մէջ կը տեսնէր հոյակապ եսասէր
մը եւ ուրիշ ոչինչ: Ինքզինքը փրկելը չէր բաւեր այժմու
բարոյականին մէջ: Մեղքէն զգուշութիւնը չէ, որ կը յօրի-
նէ արդարը: Զանգուածը շահիլ. ահա՛ նոր իմպերատիւ
փառեկորիկը: Ինքզինքը վտանգել. ահա՛ Մաթիկին բա-
րոյաչափը մարդեղէն արժէքներէն: Ուրիշ բա՞ն՝ իր ալ
ըրածը: Երիտասարդ արմաշականը չէր կրնար Կտուցի
միանձնեւորուն նման զգալ իր ժամանակը: Անիկա կը
հաւատար իր ժողովուրդին, անոր թափանցող տուրքե-